Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2772



Գրպանատետրակը բոլոր յերկրների միացեք

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 7

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՄԻ
ԵՐԵՎԱՆ—1924

ЗК 26
9-28

3K96
9-28

07 JUN 2005

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 7.

20 NOV 2009

ԼԵՆԻՆԸ
ՅԵՎ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՄԻ
ՅԵՐԵՎԱՆ — 1924

1719

ГОСУДАРСТВЕННАЯ
БИБЛИОТЕКА УКРАИНЫ
ЕЗ ВЕРНИ

16 JUL 2013

2772

ՀԱՍՊ-Ա

48944-65

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋՐԴ ՏՊԱՐԱՆ 2881

ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

ԼԱՋԱՐ ՉԱՑԿԻ

ԻԼՅԻՉԸ ՑԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար թե այժմ կարելի լինի լիովին վորոշել այն դերը, վոր խաղացել է ընկ. Լենինը կոմունիստական պատանեկական շարժման զարգացման գործում Ռուսաստանում և այլ յերկրներում։ Դրա համար մենք նյութեր չունենք, իսկ վորևե բան այդ մասին գրելը դեռ վաղաժամ է։ Սակայն միության հնգամյակի առթիվ մենք կարող ենք մի քանի եպիզոդներ բերել Վլադիմիր Իլյիչի մեր կազմակերպության հետ ունեցած անձնական հարաբերություններից, վոր արդեն պատմությանն են վերաբերում և վորոնք մեծ նշանակություն են ունեցել մեր աշխատանքի տարբերզում։ Ամենից առաջ Վլադիմիր Իլյիչի միջոցով է Կոմյերիտմիությունը առաջին անգամ համառուսական մասշտաբով կուսակցության կողմից ճանաչվել և նրա աջակցությունը վայելել։ Ինչպես հայտնի յե, մինչև առաջին համառուսական համագումարը (հոկտեմբեր-նոյեմբեր 1918 թ.) բանվոր յերիտասարդության միությունների մեծ մասը, քաղաքականապես և գործնականապես պաշտպանելով բայլշևիկական կուսակցությունը, ձևականորեն նրանից անկախ և յեղել, չի ունեցել զուտ բայլշևիկական ծրագիր և կուսակցական որգանների հետ վորոշ կազմակերպչական հարաբերությունների մեջ չի յեղել։

Առաջին համառուսական համագումարը համաձայնվել է ՌԿԿ. հետ, ընդունել ՌԿՑԵՄ կոչումը, բայց միությունը մնացել է անկախ կազմակերպություն։ Պայքարի

և աշխատանքի ընթացքում կուսակցությունը կամաց-կամաց ավելի յե մոտեցել միությանը։ Յեվ այդտեղ հսկայական դեր և խաղացել այն հագամանքը, վոր ընկ. Լենինին այցելել և առաջին համառուսական համագումարի նախագահությունը։

Չեմ հիշում Իլյիչի մոտ պատգամավորություն ուղարկելու միտքը ում գլխումն և ծագել։ Այդ պատգամավորությունը պիտի փոխարիներ Իլյիչի կողմից համագումարն այցելելուն, վոր տեղի չունեցավ նրա զբաղված լինելու պատճառով։ Տեսակցության կազմակերպման գործը իր վրա վերցրեց Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան, վորը միշտ ոգնել և մեզ Իլյիչի հետ մեր ունենալիք հարաբերությունների խնդրում։ Մեզ համար նշանակված և յեղել ընդունելության ժամը և նույնիսկ բոպեն։ Ուրախ տրամադրությամբ խմբովին լինն հոգուց բաղկացած նախագահությունը ուղևորվում և Կրեմլ։

Ճանապարհին տեղի ունեցավ առաջին համագումարի պատմության մեջ հայտնի միջադեպը շան հետ, վորի վրայով անցնում և ավտոմոբիլը։ Նախագահության վորոշմամբ ընկ. Դուդաչևին վիճակվեց սպանել տանջվող և հեծեծող կենդանուն։ Շան հետ պատահած այդ միջադեպը, վորը մեծ տպավորություն թողեց անցորդների և միլիցիայի վրա, մեզ կանգնեցնել և տալիս, և մենք մի քանի բոպեյով ուշանում ենք։ Հետևանքը լինում և այն, վոր մենք ստիպված ենք լինում յերկու ժամ սպասել։ Ժամանակը և աշխատանքը բաշխելու ճշտություն — ահա թե ինչ կարող և սովորել ամեն մի կոմյերիտական ընկ. Լենինից։ Ճանապարհին և ընդունարանում մենք Իլյիչի հետ խոսելու ամեն տեսակի ծրագրեր եյինք կազմում, վորովհետև մենք բոլորս առաջին անգամն եյինք գնում նրա մոտ, և պիտի ասել, վոր այդ մեզ համար այնքան եվ հասարակ բան չեր։ «Հռետորը» պիտի լիներ ընկ. Յեֆիմ Յեալինը, վորը պիտի համառոտակի պարզեր շարժման և համագումարի աշխատանքի դրությունը։ Ինձ հանձնարարված եր սեղմել նրա վոտքը այն դեպքում, յեթե ճառը հաջող չլինի։

Վերջապես, մեզ հրավիրում են Վլադիմիր Իլյիչի առանձնասենյակը։

Այդ այն լուսավոր և ընդարձակ, մեծ դրասեղանով և գրքերի պահարանով սենյակն եր, վոր այնքան հաճախ մենք տեսնում ենք ընկ. Լենինի նկարներում։ Իլյիչը մեզ դիմավորում և և տեսնելով մեր շատ լինելը և բազկաթոռների քչությունը, սկսում և աթոռներ բերել հարևան սենյակից։ Իլյիչի առաջին իսկ խոսքերից և շարժումներից մեզ զարմացնում և նրա վոչ սովորական պարզությունը (ահա մի հատկություն, վորն անհրաժեշտ և ամեն մի կոմյերիտականի, մանավանդ «գիտունների» թվին պատկանողներին)։ Մի բոպեյից հետո մենք արդեն մեզ զգում եյինք վորպես մեր տանը և Իլյիչը մեր ավագ ընկերն ու բարեկամն եր։

Յերբեմն Յեալինը փորձում և արտասանել իր ճառը, բայց դրանից վոչինչ դուրս չի գալիս։ Իլյիչը գերադասում եր տեղեկություններ հավաքել այլ ճանապարհով։ Նա միաժամանակ խոսում եր բոլոր 9 մարդկանց հետ, վոչ մի անգամ զրույցի թելը չկտրելով։ Նրան հետաքրքրում են վոչ թե ընդհանուր հարցերը, այլ կոնկրետ տվյալները։ Յերբ Յեալինին հաջողվեց ասել մեր տեսակետից ամենակարևորը, վորի մասին մենք այնքան յերկար վիճել եյին համագումարում, իսկ մենք վորոշել եյինք միությունը վերանվանել «Կոմունիստական», Իլյիչը պատասխանում և.

—Կարևորը անունը չե—և շարունակում և խոսել «փոքր» գործերի մասին։ Բեզիմենակուց նա հարցրեց Վլադիմիրի

բոգոմազների (սրբի պատկերներ նկարողներ) մասին, Ժենյա Հերբից՝ միության և համագումարի աղջիկների մասին, Ռիվկենից՝ պիտերյան յերիտասարդության մասին և այլն։

Իլյիչի ուժի և իմ վոտի ճնշման տակ՝ Յեսլինն արդեն դադարեցրել եր իր ճառ ասելու փորձերը, իսկ Իլյիչը այլ բան ճարպիկությամբ հարց ու փորձ արավ, այնպես վոր 15 բոպեյից հետո մենք արդեն պատմելու բան չունեյինք։

Մենք Իլյիչի մոտ գնացինք առանց վորևե գործնական առաջարկների, լցված առաջին համագումարի վոգևորությամբ և նրան տեղյակ կացուցանելու ցանկությամբ։ Այդ պատճառով մենք արդեն ուզում եյինք դուրս գալ, յերբ նա վերցրեց մի թերթ թուղթ և մի գրություն գրեց հանգուցյալ Յակով Միխայլովիչ Սվերդլովին՝ մեր կուսակցության լավագույն կազմակերպչին, շեշտելով, վոր՝ Կուսակցությունը պետք է պատրաստի յերիտասարդության միությունը։

Դրանով վերջացավ մեր տեսակցությունը. Իլյիչի գործնական այդ յեզրակացությունից Սվերդլովն ել ավելի գործնական յեզրակացություն հանեց և առանց վորևե խոսակցությունների, իրեն հատուկ գործնականությամբ, մեզ տվեց 30,000 բուբլի, վորը մեզ համար արժեք ուներ վոչ միայն այն պատճառով, վոր այն ժամանակվա համար դա մի խոշոր գումար եր, այլ և վորպես կուսակցության կողմից նորածնունդ համառուսական միության տրված առաջին ոգնության սիմվոլ։ Իսկ Իլյիչի գրությունը մենք յերկար պահեցինք, ինչպես մեր ընկերներն եյին կատակելով ասում՝ վորպես ուժեղագույն մի արգումենտ մեր ամենորյա հարաբերությունների ընթացքում կուսակցության կենտկոմի հետ. այդ հարաբերություններն սկսվեցին դրանից մի քիչ հետո։

Իլյիչը ոգնեց մեզ վոչ միայն նորմալ հարաբերու-

թյուններ հաստատելու կուսակցության հետ. նա վորոշեց և կոմյերիտմիության անելիքներն ու աշխատանքի մեթոդները յերրորդ համառուսական համագումարում արած իր հայտնի զեկուցումով (1920 թ. հոկտեմբեր)։

Մեր միությունն այն ժամանակ գտնվում եր խմորման գրության մեջ։ Շարժման մեջ առաջ յեկած ընդհանուր ճգնաժամի հողի վրա դիսկուսիա և տարաձայնություն ծագեց ընկ. Դունաևսկու հետ և սուր վիճաբանություններ սկսվեցին Ուկրաինայի ընկերների մի մասի հետ։ Դրությունը միության մեջ այնքան լուրջ եր, վոր կենտկոմն ինձ հանձնարարեց տեղեկացնել Վլադիմիր Իլյիչին գրության մասին և միաժամանակ խնդրել նրան, վոր քաղաքական զեկուցում կարդա համագումարին։

Յես մանրամասն կերպով պարզեցի ընկ. Լենինին զանազան ընկերների տեսակետները և հարցրի նրա կարծիքը։ Յեվ այդ միջոցին ինձ վիճակվեց ծանոթանալ նրա մի այլ գծի հետ՝ անծանոթ հարցերի հետ վարվելու ըգդուշությունը և այն, վոր նա իր անձնական կարծիքը հայտնելով չեր ցանկանում բարդացնել կուսակցության կենտկոմի հավաքական վորոշումը։ Ի պատասխան իմ տված հարցին, Վլադիմիր Իլյիչը աչքերը կուչ ածեց, քմծիծաղ տվեց և ասաց.

—Կազմրաժինը կը քննի և կլուծի։

Զեկուցում նա համաձայնվեց կարդալ։ Ուղիղ ժամի 8-ին, իր խոստումի համաձայն, նա յերևաց համագումարում՝ որինակ տալով մնացած «առաջնորդ» հռետորներին, վորոնք մեծ մասամբ իրենց անճշտապահությամբ ջրդայնացնում են հանդիսավոր հավաքույթների և ժողովների նախագահներին և մասնակիցներին։

Յես առաջարկեցի խնդրել Վլադիմիր Իլյիչին ընթացիկ մոմենտի մասին խոսելու համար։

—Զե, ընթացիկ մոմենտի մասին յես չեմ խոսի,—

ВСЕНАРОДНЯ БІБЛІОТЕКА УКРАЇНИ В КИЇВІ.

հայտարարեց անսպասելի կերպով Իլյիչը։

—Ի՞նչպես։

—Այնպես, տաղտկալի է։ Ձեզ պիտի կարդամ յերիտասարդության միության անելիքների մասին կամ բոլորովին չպիտի խոսեմ։

—Բայց չե՞ որ դուք վոչ մի նյութ չեք ունեցել։

—Միր անհանգստանալ։

Իլյիչը գրպանից հանեց մի մեծ թերթ թուղթ, վոր գրված եր ամենայն խնամքով և ապացուցում եր, թե ինչքան լուրջ կերպով և նա պատրաստել իր զեկուցումը։ (Սա ևս մի լավ օրինակ է, որ չպիտի մոռանալ)։

Այդ զեկուցումը, վորի մեջ բացատրվում են յերիտասարդության կոմունիստական դաստիարակության հիմունքները, բոլորին հայտնի է։ Այն ժամանակ այդ զեկուցումը մեզնից շատերի կողմից բավականաչափ չի գնահատվել։ Նա դիտոնաս մացրեց պայքարի այն մթնոլորտի մեջ, վորը տիրում եր համագումարում։ Բայց յերբ հետո, մասնավորապես նոր ծրագիր կազմելիս և ՆԵՊ-ին անցնելիս, մենք սկսեցինք լուրջ կերպով մտածել միության հիմնական անելիքների և նրանցից հանվող գործնական յեզրակացությունների մասին, Իլյիչի զեկուցումը մեզ համար դարձավ մեր աշխատանքի հիմքը, մեր միութենական ավետարանը։ Այդպիսին պիտի լինի նաև այժմ յուրաքանչյուր գիտակից կոմյերիտականի համար։

Ի վերջո պիտի հիշատակել, վոր միության յերրորդ լուրջ խնդիրը լուծելու —այսինքն Միջազգային պատանեկական կազմակերպությանը մասնակցելու գործում ևս—մեզ ոգնել է Վլադիմիր Իլյիչը։

1919 թվին, Բերլինի կոնգրեսի նախորեյին, վորտեղ հիմք դրվեց Յերիտասարդական Կոմունիստական Ինտերնացիոնալին, Իլյիչը ՌԿՅԵՄ ծրագրի նախագիծ և կազմում և մի շարք առաջարկներ անում կոնգրեսին, վոր հետո վերջ

ջինիս կողմից ընդունվում են։

Արտասահման մեկնելուց առաջ ես, վորպես ՌԿՅԵՄ պատգամավոր, գնացի Վլադիմիր Իլյիչի մոտ, վորպեսզի պարզեմ Յերիտասարդության Ինտերնացիոնալի նկատմամբ մեր ունեցած ծրագրերը։

Վլադիմիր Իլյիչը դեռ պատերազմի ժամանակ կապ և ունեցել յերիտասարդության զվիցերական և ինտերնացիոնալ կազմակերպությունների հետ։ Ցեվ յերբ Վլադիմիր Իլյիչը հավանություն տվեց մեր ընդհանուր յենթադրություններին ապագա Յերիտկոմինտերնի մասին, մենք մեզ ավելի հաստատակամ և համոզված զգացինք մեր աշխատանքի այդ նոր ասպարիզում։

Նա հասկանում եր պատանեկական ինտերնացիոնալի լեգալիզ դերի ամբողջ հսկայական կարևորությունը թե արտասահմանում և թե Ռուսաստանում։

Այդպես, այն տարիներին, յերբ մեր կուսակցության վաստակավոր և հին անդամները ՌԿՅԵՄ վրա նայում եյին, վորպես սակավալուրջ գործի վրա, յերբ ինքը միությունը դեռ թույլ եր ու չզարգացած, հեղափոխության մեծ առաջնորդը անձնական մասնակցությամբ ոգնեց մեզ կառուցելու այն կոմյերիտմիությունը, վորը այժմ իր հնգամյակին և տոնում և իրավամբ կուսակցության և հանրապետության պարգևն է համարվում։ Կոմյերիտմիությունն իր շնորհակալության խոսք կասի հոբելյանի որը հին գվարդիայի անդամներից մեծագույնին։

Ֆ. ՊԼՅԱՆՈՒՍՈՎ

ԻԼՅԻՉԻ ՄՈՏ—ՍՏՈ—ՅՈՒՄ

1921 թվի հուլիսի 1-ը կրկնակի պատմական որ է և՛ կոմյերիտմիության, և՛ բանվոր յերիտասարդության համար։

Նախ՝ այդ որն իր աշխատանքներն է շարունակում Յերիտասարդությանկոմինտերնի կոնգրեսը։

Յերկրորդ՝ նույն այդ որը Դունայևսկու հետ մենք գնում ենք աշխատանքի և պաշտպանության խորհուրդ՝ համոզելու Վլադիմիր Իլյիչ Լենինին, վոր մեր կոմյերիտական տեսակետը արդյունաբերության անչափահաս բանվորների կրճատման նկատմամբ ճիշտ է։

Դուք ուզում եք իմանալ, թե ինչպես և ինչու համար այդ հարցում մենք հասանք մինչև Իլյիչին։ Խնդրեմ։ Իր յերեվալու առաջին որերից իսկ Նեպը մեծ թըվով անչափահասներ արձակեց գործարաններից և հիմնարկություններից։

1921 թվի մայիս-հունիս ամիսներին մեր միության կենտրոնական կոմիտեն բանվոր յերիտասարդության տընտեսական գործերի մի իսկական կոմիսարիատ եր դարձել։

Չեր անցնում մի որ, վոր կենտկոմում միության վորևե բանվորական կազմակերպությունից լուր չստացվեր այսքան կամ այնքան հարյուր անչափահաս բանվորներ արձակելու մասին։ Յեվ այդ բոլոր տեղեկությունները սովորաբար վերջանում եյին մի ահեղ պահանջով՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել աշակերտների դեմ ուղղված այդ արշավը թուլացնելու համար։

Մեզ համար պարզ եր, վոր յեթե մենք անչափահասների արձակման խնդիրը ուղիղ հունի մեջ չդնենք

ապա քաղաքացիության վերացման համար կատարված այն ամբողջ աշխատանքը, վոր այդ ժամանակ միության մեջ կարգի դրված եր համարվում, իդերև կելնի և մոտակայում չի վերականգնվի, վորպիսի հանգամանքն ել ավելի կը խորացնի այդ միջոցին ծայր առած միության ճգնաժամը։

Կենտկոմը, այդ պատճառների ազդեցության տակ, ահագանգ խփեց։

Ինձ հանձնարարվում է անմիջապես բանակցություններ մտնել աշխատանքի և պաշտպանության խորհրդի և արհեստակցական միությունների հատուկ կենտրոնական խորհրդի հետ՝ հատուկ հանձնաժողով հիմնելու համար, վորը պիտի անչափահասների արձակման կարգի մասին աշխատանքի և պաշտպանության Խորհրդի վորոշման նախագիծ մշակեր։

Կենտկոմի մեջ հատուկ հանձնաժողով է կազմվում Դունայևսկուց, Պոլիֆեմից և ինձնից, վորպեսզի կազմենք այդ նախագիծը, վորը պիտի նյութ ծառայեր մեր առաջարկով հիմնվելիք ՍՏՈ-ի և ԱՄՀԿԽ (Արհ. Միութ. Հատուկ. Կենտր. Խորհ.) ստեղծված հանձնաժողովի համար։

Վերջինս հիմնված և հունիսի վերջին և նա յեր մեղավոր, վոր մենք 1921 թվի հուլիսի 1-ին հանդես յեկանք ՍՏՈ-ի նիստում։ Այստեղից և միայն այստեղից ծագեց այն հանդուգն միտքը, վորը մենք շատ հասարակ և հեշտ կերպով ձևակերպեցինք այսպես.

Բանը կհասցնենք Իլյիչին, բայց մեր նախագծից վոչ մի կետ, վոչ մի բան չենք զիջի։

Ինչպես և պետք եր սպասել, հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող համարյա թե բոլոր ժողկոմատները բանվոր յերիտասարդության համար, շատների կրճատման հետևանքով ստեղծված ծանր դրության առթիվ թուղթ չինայեցին, և առաջին իսկ նիստին ներկայացան իրենց սեփական նախագծերով, վոր վոչ ավել, վոչ պակաս, բան վիժվածքներ եյին։

Ամենակարևորները և վորոշ կետերի շուրջը իրարից տարբերվող նախագծերը մերը և ԱՄՀԿԹ-ինն էին։ Պարզ էր, վոր հանձնաժողովի մեջ կռիվ պիտի սկսվեր բացառապես նրանց շուրջը։ Ցեվ այդ կռվին մենք պատրաստվեցինք։

Սկսվեցին յերկու որ տևող տաք վիճաբանություններ և հատաձայնումների շարանը—ամեն մի հանձնաժողովի այդ մշտական ուղեկիցները։

Չնայած մենք խախտելով հանձնաժողովի կանոնադրությունը մեկի փոխարեն յերեքով եյինք նիստ մրցում, չնայած մենք յերբեմն մի ձայնի փոխարեն յերեքն եյինք տալիս, բայց և այնպես մեր մի շարք կետերը հանձնաժողովը տապալում էր։ Ցեվ տապալում էր այնքան հիմնավոր կերպով, վոր մեր յելքը մնում էր ՍՏՈ-ի նիստը։ Նրա վրա դրված էր մեր ամբողջ հույսը, այնտեղ մենք պետք է ապացուցեյինք, վոր Կոմյերիտմիությունը բանը բուրդ է...

Այստեղից միանգամայն հասկանալի յե, վոր հուլիսի 1-ի ամբողջ որը մենք զբաղված պես վազվզել ենք հեռագրեր, թվեր, տեղեկություններ հավաքել, ի մի զումարել փաստերը, մեր մեջ բաժանել վիճելի կետերը լավ պաշտպանելու և ամեն տեսակի պատրաստություն տեսել ՍՏՈ-ի նիստում հանդես գալու համար։ Վերջապես ուղևորվում ենք նիստի։

Ակնածանքով, անվճռական կերպով բանում ենք դուռը և մեկը մյուսի հետևից անցնում նիստի դահլիճ։

Սենյակում առաջին իսկ հայացքից նկատում ես լուսամուտից ընկած արևի ճառագայթներից պսպղացող Իլյիչի ճաղատ գլուխը։ Նա նստած է մի մեծ սեղանի առաջ, կենտրոնում, վորը կարծեք թե մեծատառ Т ի վերջին գիծն է ներկայացնում, կազմված յերկու սեղանից։

Իլյիչը, վորպես պատասխան, իր հերթին մեր վրա յե նետում մի յերկարատև, անհանգիստ հայացք և մեղմժպիտով, թոթովելով հարցնում՝ մատնացույց անելով սենյակի պատի մոտ դրված բազկաթոռները։

—Դուք Կոմյերիտմիության ներկայացուցիչներն եք։

Յերկուսս ել, դժվար է ասել, թե ինչու համար խկապես, շփոթված, վորպես կարմիր աղջիկներ, արտանունքներս անդամ կախած և կարմրատակած ու միաժամանակ «այո»-ի պես մի բան փնթփնթալով՝ յուրաքանչյուրս բազկաթոռների վրա մի փոքրիկ տեղ ենք գրավում։

—Հետևյալ հարցը.—անչափահասների շատների կրճատման մասին—ԱՄՀԿԹ հանձնաժողովի զեկուցումն է։ Ո՞վ է զեկուցելու։ Դուք—Իլյիչն իր հայացքը գցում է հանձնաժողովի նախագահի վրա։ Խոսքը ձերն է։

Հանձնաժողովի նախագահը նախ մի փոքրիկ ինֆորմացիա յե տալիս և հետո կարդում է վորոշման նախագիծը այն ձևով, ինչպես նա ընդունված է հանձնաժողովի կողմից. այդ նախագիծը այսպիսի վերտառություն է կրում

«ՍՏՈ-ի վորոշումը արդյունաբերության մեջ աշխատող անչափահասներին արձակելու կարգի մասին»։

Ընթերցումը վերջացնելուց հետո Իլյիչը հանձնաժողովի նախագահին հարց է տալիս.

—Իսկ մինթե տրանսպորտում կրճատում չի կիրառվում։

Ժողովրդական տնտեսական գեր. խորհրդի նախագահ Բոգդանովը դրական պատասխան է տալիս։

—Այն ժամանակ ավելացրեք և տրանսպորտում, դիմում է Իլյիչը իր կողքին նստած նիստի քարտուղարին։

Հետո Իլյիչն իր տրամաբանությունն է հայտնում այն առթիվ, վոր նախագծում թույլ կերպով են մշակված անչափահասների գործազրկության դեմ պայքարելու միջոցները։

Ցես և Դունայեվսկին, ինչպես ասում են, բոյ ենք քաշում։ Մեր ուղեղում հաղթական մի միտք է ծագում։

—Հ՞ը, կերաք։ Այժմ Իլյիչը մեր առաջարկը չընդունել ցույց կտա ձեզ։ Ա-ա, նեղ տեղն եք ընկել, այդ լավ է, մյուս անգամ ավելի զգույշ կլինեք։

Այդ միտքն ինձ թեավորում է, և յես բարձրացնում եմ ձեռքս։ Իլյիչը նկատում է ոդում տարածված ձեռքս և ասում.

—Կոմյերիտմիության ներկայացուցիչը խոսք ունի ասելու։

Վոտքի յեմ կանգնում։ Քիչ առաջ ունեցած մարտական տրամադրությունս չքանում է և իմ ամբողջ ճառը, վոր պիտի ջարդուփշուր աներ հանձնաժողովին իր անպետք նախագծով, լինում է այն, վոր յես հասարակ, չոր հաղորդագրություն եմ անում, վոր մենք ունենք մի շարք, հանձնաժողովի կողմից չընդունված կետեր, վորը մենք յեկել ենք անմիջականորեն ՍՏՈ-ի քննությանը դնելու, և վոր այդ պատճառով մենք առաջարկում ենք նախագծի կետառկետ քննությունը կատարել։

Իլյիչը հայտարարում է.

—Անցնում ենք նախագծի կետառկետ քննությանը։

Հանձնաժողովի նախագահը կարդում է առաջին կետը, վորի միտքը մոտավորապես հետևյալն է. անչափահասների ժասսայական արձակում չպետք է կատարել։ (այս կետը փրփուրը բերաններիս մենք ենք հանձնաժողով քաշ տվել, և, ճշմարիտ վոր յես այժմ էլ չեմ իմանում, ինչ ենք ուզեցել մենք դրանով ասել)։

—Ինձ թվում է, վոր անչափահասների արձակումը կարելի յե կարգավորել առանց վորևե դժվարությունների։ Կան արդյոք այս կետը պաշտպանողներ։ Վոչ։ Անցնում ենք հետևյալին։

Իլյիչի այդ անսպասելի հայտարարությունն այնպես

ազդեց մեզ վրա, վոր մենք չկարողացանք նույնիսկ բերան բանալ, մինչդեռ նախագահը կարդացել էր արդեն յերկրորդ կետը, վորը և նիստի կողմից միաձայն ընդունվել էր։

Հետևյալ հարցը, վոր գյուղում աշխատելու համար զործազուրկ անչափահասներից հնձողների ջոկատներ կազմակերպելու խնդրին երվերաբերվում, ընդդիմախոսություն առաջ բերեց բանվորա-գյուղացիական տեսչության այն ժամանակվա ժողկոմ Ավանեսովի կողմից։

Սակայն Իլյիչն հոգուտ այդ կետին արտահայտվեց և կետն ընդունվեց։ Մի բան չափազանց բնորոշիչ է, մենք այդ կետին մոտենում էինք այն տեսակետից, վոր անչափահասները պիտի գործ ըստանան, իսկ Իլյիչը նրան միանգամայն այլ կերպ էր մոտենում. նրա պատճառաբանությունների մեջ ամենադրդիչավորն այն էր, վոր բանվոր յերիտասարդությանը գյուղի ոդ է հարկավոր, այլ կերպ ասած՝ նրանց առողջության մասին պետք է հոգալ։

Նախագծի մնացած կետերը համարյա թե ընդդիմախոսության տեղիք չտվին և նիստի կողմից ընդունվեցին։

Հերթը հասավ մեր ուղղումներին։ Առաջինը խոսք ստացա յես։

Իմ պարտականությունն էր յերկու կետերի մասին խոսել. առաջինը, կարծեմ անչափահասներից հատուկ խումբ կազմելու, և աշխատանքի բորսայից ավելի լավ և արագ կերպով նպաստ ստանալու մասին էր. յերկրորդը՝ անչափահասների բանվորական ուժը ձեռնարկությունների ներսում վերաբաշխելու մասին, վորն, ըստ մեր ասածի, անչափահասներին սեվ աշխատանքներից վորակյալ աշխատանքների փոխադրելու ձև պիտի ստանար։

Հակառակ իր սովորության, Իլյիչը վոչ իմ և վոչ Դունայևսկու խոսելու ժամանակը չեր սահմանափակել։ Նրա

կիսախուփ ձախ աչքը և նույն մեղմ ժպիտը կարծեք թե ուզում էին ասել մեզ. «խոսեք, ինչքան կուզեք, միևնույնն է, չէ որ մենք գիտենք, որ շատ յերկար չը-պիտի խոսեք»։ Այդպես էլ յեղավ։

Զնայելով, որ յես ամեն տեսակի թղթերով, հեռագրերով և այլ նյութերով ծանրաբեռնված էի, բայց և այնպես, ինչպես յես կցանկանայի ոգտագործել, այդ ամենը, չհաջողվեց, և թերևս լավն էլ հենց այդ եր։ Յեթե այդ նյութերի շուրջը գեկուցում տարու լինեյի կոմյերիտմիության մեջ, ո՞ անպայման ժամ ու կես պիտի զոհեյի։ Իսկ այնտեղ յես մի քանի բոպեյի մեջ արի իմ առաջին առաջարկը, ամենակարևոր թվերը մեջ բերելով, և այդ եր բոլորը։ Ահա թե ինչու իսկույն և յեթ մի բան կը սորվորես։ Ահա թե ինչու, յեթե Վլադիմիր Իլյիչի հետ շփվես վոչ թե մեծ վորես, յեթե Վլադիմիր Իլյիչի հետ շփվես վոչ թե մեծ ուղարձակ միտինգում, այլ գործնական փոքրիկ նիստում։

— Ուռռա՜ թվում է, որ նման վճիռներով ՍՏՈ-ի վորոշումը ծանրաբեռնել չպետք է (Իսկույն Իլյիչը ասեց մեզ խրատել)։ Այստեղ պիտի մատնանշվեն ընդհանուր վորոշումները։ Իսկ ձեր այդ առաջարկությամբ դուք դիմեք ԱՄՀԿ-ին և աշխատողկոմատ և թող նրանք յերկու կողմերին համաձայնեցնելու կարգով, առանց ՍՏՈ-ի վորևե ճնշման, նման վորոշում հրատարակեն։ Այս առաջարկը պաշտպանողներ չկան։ Անցնում ենք հետևյալ ուղղումին։

Իմ յերկրորդ ուղղման վերաբերյալ յես ասացա Իլյիչի խորհուրդը՝ խոսել աշխատողկոմի հետ. և աշխատողկոմ Շմիդտը խոստացավ, որ նման վորոշում կը հրատարակի։

Դրանով յես ստիպված էի հանգստանալ՝ մարտադաշտը թողնելով Դունաևսկուն։ Իսկ նա, պարզ է, պաշտպան կանգնեց իր սոցկրթության վարչության և նույն պարտականություններն ուներ հետևյալ հարցերի

նկատմամբ. դրա նպատակն այն եր, որ Լուսժողկոմատի գլխարկրթվարն իր աշխատանքների կենտրոնում դնի և, կարծեմ, ֆաբզավուշի դպրոցներ հիմնի ի հաշիվ II-րդ աստիճանի դպրոցների մասնակի լիկվիդացիայի

Դունաևսկու խոսքի հաջողությունները նույնն էին։ Նրան Իլյիչը լուսժողկոմատ և ուղղում, որպեսզի վերջինս իր ժողկոմատական կարգով քննության առնի այդ հարցերը և իր յեզրակացությունը հանի։

Դրանից հետո վորոշման նախագիծը ամբողջապես հաստատվում է, և մենք, բաժանվելով Իլյիչից, ուղևորվում ենք մեր տները։

Իլյիչի խորհուրդները մեզ համար չափազանց ոգտավետ դուրս յեկան։ Նրանք մեզ տեղներիցս շարժեցին և դեռ մի շաբաթ չանցած մենք այն հարցերի մասին, որ մեզ մինչև այդ բարդ էին թվում, ուղիղ և պարզ վորոշումներ ունեցինք։

Յեվ միայն այն ժամանակ մենք հասկացանք, թե վորքան է մեզ համար թանկ Իլյիչը, որ ամբողջ կես ժամ անբեկ յերեխաներին բացատրում եր, թե ուր և ինչպես դիմել իրենց համար չպարզված հարցերով։

Հենց նրան մենք իսկույն և յեթ իրավացի համարեցինք, իսկ հանձնաժողովի հետ, թերևս, այսոր էլ համաձայն չեմ...

Այսպես, յերկու տարի առաջ, կոմյերիտմիությունը դաս և առել Իլյիչից Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդում։

ՀԱՍՏ

Ա. ԲԵԶԻՄԵՆՍԿԻ

„ԻԼՅԻՉԻ“ ՄՈՏ

Աշնանային որեր էին։ Սակայն արեգակը դեռ տաք էր և յերկինքը չինջ։ Մոսկվայի փողոցներում սովորական իրարանցում էր և աղմուկ։

Մյասնիցկայա փողոցի ներքափողոցներից մեկի հրապարակային տներից մեկում սասնյակ յերիտասարդ ձայներ բարձրաձայն խոսում էին, դղրդացնելով մեծ սենյակներն ու միջանցքները։

Այդտեղ էր գումարված յերիտասարդության միության համառուսական անդրանիկ համագումարը։

Աղմկալի յեր, ուրախ, զվարթ։

Ահա բացվում է համագումարը, ասում են ջերմ վողջույնի ճառեր, վորոտում են ծափահարությունները։

Առաջարկում են պատվավոր նախագահ ընտրել Վլադիմիր Իլյիչին։ Ցնծում են յերիտասարդ պրոլետարները, լսելով իրենց մեծ առաջնորդի, ընկերոջ և ուսուցչի անունը։ Նույն ցնծությամբ ընդունվում է և նրան վողջույնների համար համագումարից ներկայացուցիչներ ուղարկելու առաջարկը։

Այդ պատավոր դերը բաժին ընկավ համագումարի նախագահության։

Շատ լավ եմ հիշում, թե ինչպես էինք հուզվել մենք, այդ նախագահության անդամները։ Հավաքվեցինք միասեղ և սկսեցինք քննել այդ մեծ ձեռնարկը։

— Բայց ինչպես պիտի մոտենանք նրան, ինչպես պիտի խոսենք,— անհանգստանում էր մեկը։

— Ջնայած վոր ուրախ ենք, բայց նրի վախենում ենք — ձայնակցում է մյուսը։

Այդ հարցը մեզ շատ և դրաղեցրել։ Ո՞վ պիտի խոսի

համագումարի անունից, բոլորը, թե մեկը։ Ով կասի։ Ի՞նչ կասի։

Վերջապես վորոշեցինք այդ միտքան հանձնել «գեկուցող» ընկ. Ցեպլինին։

— Ամբողջ գիշերը չպիտի քնեմ— հայտարարեց նա — դուցե մի բան հնարեմ։

Հետևյալ որը գնում ենք։ Բայց դուրս է գալիս, վոր հենց այսոր «Իլյիչը» մեզ ընդունել չի կարող։ Կուսակցության կենտկոմից Կրեմլ զանգահարելով իմանում ենք, վոր պիտի գնալ վաղը, ժամի 12-ին։

Նորից մի անհանգիստ որ ու գիշեր։ Վերջացնելով համագումարի առավոտյան նիստը, ուղևորվում ենք վերջապես Կրեմլ։

Ինքներս կատակի յենք բռնում իրար, բայց ինչպես ասում են ամենքիս, ծնկներն էլ ծալվում են։

Հասանք, մտանք ընդունարանը։ Ինարկե, ուշացել էինք։ Բայց մեզ հայտնեցին, վոր մի ընկերոջ գեկուցումից հետո ընկ. Լենինը մեզ կընդունի։

Սպասում ենք, հուզվում։

— Վոչինչ,— ասում է Լազար Շացկինը Ցեպլինին— բա կոզբին յես կլինեմ։ Յեթե կսկսես հիմարություններ դուրս տալ, յես բա վոտը կը սղմեմ, այդպես ավելի լավ կլինի...

Ծիծաղում ենք, հուզվում։

Վերջապես... բոլորս միասին «Իլյիչի» կաբինետն ենք անցնում։ Ցեպլինը գնում է առջևից։

Կաբինետից դուրս յեկողի հետևից մի բանի խոսք ասելով, յերեսը դեպի մեզ և անում ընկ. Լենինը։ Հագնված և հատարակ, դրպանից կախ և ընկած յերկար տաք կաշնեն, ժպտում է, բարևում։ Նստում ենք։

«Իլյիչն», ըստ յերևույթին, հասկանում է մեր դրությունը։

Հենց վոր Ցեղլինը բերանը բանում է, Իլյիչը նրան լռեցնում է։

Մի բոպեյից հետո մեր հուզմունքից հետք անգամ չի մնում։ Նա, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը, այդքան մոտ, նրբազգաց և ուշադիր դեպի մեզ։

Ցեղլինը հպարտությամբ հայտարարում է, թե համագումարը վորոշել է միությունը կոմունիստական կոչել։

—Կարևորն անունը չէ, վրա յե բերում «Իլյիչը»։

—Բայց մենք կարդարացնենք այդ կոչումը,—թոթովում է մեկը։

Ընկ. Լենինն ի պատասխան դրան ուրախությամբ ժպտում է։

Մեզնից հարց ու փորձ է անում միության անդամների թվի համագումարի կազմի, կազմակերպությունների անդամների դասակարգային կազմի մասին։

—Ինտելիգենցիայի նկատմամբ ավելի զգույշ,—խորհուրդ է տալիս նա։

—Քանի աղջիկ կա համագումարում — հարցնում է «Իլյիչը» դիմելով Հերբին։

Այդտեղ կարծեք թե մեկը լեգվիցս քաշում է։

—Ինձը հատ—հատում եմ յես։

Բոլորը ծիծաղում են։ Հերբը Դուգաչյովի հետևից սպառնում է ինձ բռունցքով։

Գործնական շատ ուրիշ հարցեր ել է առաջարկում ընկ. Լենինը։ Խորհուրդ է տալիս կապ հաստատել Արևմուտքի հետ, խոստանում է յերիտասարդության ապագա կենտկոմին արևմուտքում լույս տեսնող ժուրնալներ տալ։

—Իսկ ինչ վիճակում են ձեր ֆինանսները—հարցրնում է նա։

—Ֆինանսներնախատեսված են, բայց կանխիկ—վոչինչ չունենք։

Ընկ. Լենինը վերցնում է թուղթը և ինչ վոր բան և գրում։

—Սա Սվերդլովին է գրված—ասում է նա։

Վեր ենք կենում, մնաք բարև ասում և դուրս գալիս՝ շոյված մեծ մարդու մեծ հոգով։

Նա առաջինն եր, վոր մեզ հոգեկան և նյութական ոգնության ձեռք մեկնեց։ Նա ըմբռնեց յերիտասարդության մեծ ձգտումները։

Թող ամեն մի պատանի պրոլետար հիշի ընկ. Լենինայս խոսքերը։

—Կարևորը անունը չէ։

ՊԵՏԱՊՈՀԱՆ

Վաղվան ամեն մի լենինական պատասխանատու կարդա Իլյիչի «Նառեր եվ հոդվածներ յերիտասարդության մասին» գիրքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լազար Շացկին — Իլյիչը և միությունը։
Ֆ. Պլյուսանով — Իլյիչի մոտ ՍՏՈ-յում։
Ա. Բեզիմենսկի — «Իլյիչի» մոտ։

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ծրագիր Բաղդրագիտության միասնական սիստեմի. գինը . . . . . 10 կ.
2. Ռ. Կ. Ցե. Մ. դրությունն ու հերթական խնդիրները։
3. Վ. Ի. Լենին (Կ Ցեմ. վերանվանման առթիվ) գինը . . . . . 20 կ.
4. Ռ Կ ՅԵՄ Ծրագիրը.
5. Ռ Կ ՅԵՄ կանոնադրություն.
6. Առաջին կարգ. (Ձեռնարկ. պատկոմական գիտելիքների) գինը . . . . . 15 կ.
7. Լենինը և կոմյերիտականները . . . . . 10 կ.
8. Ի՞նչ ասել և Լենին Ս. Զորին գինը . . . 8 կ.
9. Տասնյակներք տարեկանը (պատմվածք) Մարկ. Կոլոսով գինը . . . . . 25 կ.

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆ ՀԱՆՁՆՎԱԾ

1. Լենինը վորպես մարդ Զ. Լիլին
2. Հ. Կ. Ցեմ. Կոնտկոմի IV պլենումի բանաձևերը։
3. Բնագիտական զրույցներ Հ. Հովհաննեսյան.
4. Ծրագիր Լենինիզմի ուսումնասիրության խմբակի
5. Մարտական դիրքերում. Կանատչիկով.
6. Առորյա (պատկերազարդ պատմվածք) Իդոր Կոզլով.

Դիմել՝ Հ.Կ.Ցե.Մ. Կենտկոմի մամուլի յենթաբաժին.
Ցերեվան Ռուբենի № 9

ՀՀ Ազգային գրադարան
NL0178222

Կտ 1/2/3
գրադ

ԳԻՆԸ՝ 10 ԿՈՊ.